

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն կամբարատան մէջ:

Օտարաբարբաջիք գիմում են ուղղակի
Тифлиса. Редакция «Мшак»

Կամբարատունը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուս օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը: — Ներքին տեսութիւն: Նամակ երկամիջ: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Նամակ թիւրքիայից: Մշակիչ հեռագիրներ: Գայտարարութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Քաղաքական բոլոր նշանաւոր լրագիրները զբաղված են Մեծ-Ռուսիայի և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւններով: Այդ հարցը այնքան նշանաւոր է, այնքան հետաքրքրական է բոլոր լրագիրների համար, որ միւս քաղաքական հարցերը անուշադիր է մնում նրանց կողմից:

Երկու նշանաւոր անցքեր, որ պատահեցին վերջին շաբաթվայ ընթացքում իտալական միսիստրութեան հրաժարականը և ըսպանիական միսիստրութեան առաջարկութիւնը ազգային ժողովին ստորուկների Կուբա կղզու վրա ազատելու մասին:

Նոյեմբերի 6-ին հրաժարական տուեց պ. Կայրօլի կազմած իտալական միսիստրութիւնը, որ միայն մի քանի ամիս կարողացաւ կառավարել երկիրը:

Այդ միսիստրութիւնը սկզբից թող էր և ոչ ոք չէր հաւատում նրա երկարատևութեանը: Իրագրիները հետեւեալ հանգամանքները պատճառ են համարում Կայրօլի միսիստրութեան թողութեան համար: Իտալական պարլամենտի ձախ կողմի ոչ մի բաժնի առաջնորդներից կամ նշանաւոր անդամներից չը կամեցաւ մտնել միսիստրութեան մէջ, չը նայելով որ Կայրօլի դրա համար շատ աշխատեց: Ամբողջ միսիստրութեամբ կազմված էր նոր մարզիկներից, այնպիսիներից որոնք անյայտ էին պարլամենտին և չէին ցոյց տուել իրանց քաղաքական ընդունակութիւնները: Այդ պատճառով Կայրօլի միսիստրութիւնը կազմելու ժամանակ ցանկանում էր, որ կաբինետի մէջ մտնեն ձախակողմեան կուսակցութեան անդամներից մի քանիսը, բայց նրան

չը յաջողեց, չը նայելով որ բաւական ժամանակ բանակցում էր այդ կուսակցութեան անդամների հետ:

Բացի այն, որ Կայրօլի միսիստրութիւնը այդքան թոյլ էր, նրա անդամներն էլ միմեանց հետ համամիտ չէին: Միսիստրութեան ժողովեան բոլոր ժամանակը անհամաձայնութիւններ էին ծագում անդամների մէջ զանազան հարցերի պատճառով: Վերջին անգամ էր միսիստրութեան խորհուրդը ըննում էր աղուածքի հարկի մտցնելը, միսիստրութիւնը երկու հաւասար կուսակցութիւնների բաժանվեցաւ, որ և առիթ եղաւ սուլաճ հրաժարականի: Այդ հարկի մասին բարձրացած վիճաբանութիւններ միշտ այսպիսի վախճանի են հասցնում: Այս անգամ էր, ինչպէս առաջ, միսիստրութեան մի կէսը պահանջում էր, որ ջրաղացների մէջ աղացած նիւթեր հարկի ենթարկվեն, միւս բաժինը բոլորովին մերժում էր այդ հարկը:

Սպանիական միսիստրութեան կողմից ազգային ժողովին ներկայացրած օրէնքի նախագիծը Կուբա կղզու վրա ստորուկներին ազատելու մասին, Սպանիայի համար մեծ նշանակութիւն ունի:

Կուբա կղզու ստորուկները անդադար ապստամբվում էին, իրանց ազատութիւնը պահանջելով: Սպանիական կենտրոնական կառավարութիւնը անդադար մեծ ծախսեր պէտք է անէր կղզու վրա հանգստութիւն պահանջելու համար: Մինչև անգամ ներկայ օրպէսով սպանիական զորքերի մի մասը գտնվում է Կուբա կղզու վրա և աշխատում է ճնշել սև ստրուկների ապստամբութիւնը:

Իրագրիները յոյս ունեն, որ ազգային ժողովը կընդունի այդ նոր օրէնքի նախագիծը, որ շատ օգուտներ է խոստանում երկրին:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

28 հոկտեմբերի

Այս երրորդ անգամ է ահա, որ նիտ է կայանում մեր քաղաքային վարչութեան մէջ: Կը կամենայի մի քանի խօսք ասել վերջին նիստի մասին, բայց ամենից առաջ տեսնենք ինչպէս և ինչ անձինքներից է կազմակերպված ամբողջ Կուբան: Քաղաքապետը, ինչպէս յայտնի է, պ. Յովս. Ղորղանեանցն է. անդամներից մէկը՝ պ. Վ. Պապանեանցը, միւսը՝ Յ. Աւետեանցը, երրորդը՝ Արաս-Ղուվիսան Երվանակին. սրանց կանդիդատները՝ պ. Վլասիտ Տէր-Յովհաննիսեան, Բահրամ Բէկ և Յովակիմ Անտօնեան. այս անձինքների հետ եթէ միացնենք 66 ձայնաւորներին, կը ստանաք ամբողջ Կուբայի կազմակերպութիւնը: Թէ և մենք ներկայ չէինք ձայնաւորների ընտրութիւններին, բայց, ծանօթ լինելով մեր ժողովրդեան ընտրութեան հետ, կարծում էինք, որ անբաւարար, անարդար պէտք է լինեն այդ ընտրութիւնները: Վերջին նիստում եղած մի անդամի կանդիդատի ընտրութիւնը մեզ համոզեց, որ արդարև մեր ժողովրդը առ չխաբար ինչ ընտրութիւն ունի. նա ընտրեց նրանց, ում փորը հասաւ է, յաղթանակում է և ով գլխաւորապէս հարուստ է: Ընտրված կանդիդատը հէնց այդ արժանաւորութիւնն էլ ունի. անուր չէ հարկաւոր տալ. նա ընտրվեց 13 ձայնի դէմ 27 ձայնով: Կան ձայնաւորներ, որոնք կատարեալ անձայն են. նրանք զրկված են դատելու ընդունակութիւնից, չունեն սեփական կարծիք, չունեն ինքնուրոյն համոզմունք: Յուսալի է որ Կուբայի մի ուրիշ արժանաւոր մասը լրացնէ այսպիսի ձայնաւորի պակասութիւնը:

Վերջին նիստը կայացաւ ամիս 26-ին: Վճարելու հարցերը հինգ էին, որոնց մէջը երկուսը դարձնում են իրանց վրա առանձին ուշադրութիւն:

Յայտնի է, որ Երևանում հացը այժմ շատ թանկ է. բացի թանկութիւնը ահա նաև դուրսութիւն է նրա ձեռք բերելը: Պարոն քաղաքապետը պատմեց, թէ որքան սպառնալիք, երկիրը տուած է մինչև այժմ հացագործներին, որ բաւականաչափ հաց թխեն, այնուամենայնիւ նրանք, որքան էլ բարձր գին նշանակած լինի հացին, ամսվայ վերջերին այնքան հաց չեն թխում, որ բաւականացնի ժողովրդին: Պ. Ղորղանեանցը սրամիջ յետոյ առաջարկեց Կուբային, փնտռել այնպիսի միջոցներ, որոնք կարողանային պաշտպանել ժողովրդին հացալաճառների անզգամութիւնների, չարագործութիւնների դէմ: Կուբան տատանվում էր, նա չը գիտէր ինչ անել այս հարցում: Ամեն մի ձայնաւոր յայտնում էր, նշանակում էր մի առանձին պատիժ, վերջապէս պ. քաղաքապետը յայտնեց, որ մինչև չը լինի կոնկուրենցիա, մրցումն, չէ կարելի հացագործների չարութիւնների առաջն առնել: Բայց ի հարկէ կոնկուրենտներ, մրցողներ չը լինելով, հարցը վճռվեց այնպէս, որ ստորագրութիւն առնվի հացագործներից, որպէս զի հացը միշտ անպակաս լինի նրանց մօտ. հակառակ դիպուածում նրանցից կը ստացվի մի նշանակեալ տուգանք: Մենք բոլորովին համաձայն ենք պ. քաղաքապետի կարծիքին. մրցութիւնը միայն կարող է յաղթել հացագործներին:

Մրցողները թող լինին մի քանի մարդիկ, որոնք միասին մի ընկերութիւն կազմած, հաց մատակարարեն ժողովրդին: Թող չը վնասովն մերձեք մի փորձեց, որ եղաւ միս վաճառելու համար. ընկերութիւնը կազմվեցաւ և մի քանի ամիսից յետոյ նա, ում յանձնված էր գործավարութիւնը, ամենայն ինչ կերաւ և մի կողմ քաշվեցաւ: Փորձերը զբոսուցութիւն են սովորեցնում մարդուն, բաւական է հաստատ գործ սկսել և կազմված ընկերութիւնը յաղթած կը լինի այժմեան հացագործներին:

Երկրորդ ուշադրութեան արժանի հարցը գիմնադրային բացման պատճառով եղած հարցն էր: Տե-

ղիս ինսպեկտոր Վինոգրադով յայտնել էր վարչութեանը, թէ ինքը բերանացի և գրաւոր կերպով խօսեցել է ում հետ հարկն է երևանում պրօզիմնազիւն գիմնադրա դարձնելու համար. միայն այդ գործում բացի լուսաւորութեան միսիստրութիւնից հարկաւոր է ժողովրդի օգնութիւնը: Այս պատճառաւ, եթէ ժողովուրդը, ասել է պ. Վինոգրադով, համակրում է գիմնադրային բացման գաղափարին, յայտնեցէք ինձ՝ թէ ինչով է նա արտայայտում իր համակրութիւնը, որ ևս կարողանամ միջնորդել լուսաւորութեան միսիստրութեանը գիմնադրային համար: Կուբան որոշեց առաջինը՝ նուիրել գիմնադրային շինութեան համար այն քաղաքային հողը, որ նշանակված էր կաթօրիկների կեկեղեցու համար, և երկրորդ՝ հաւաքել ժողովրդից մի նուէր 6000 ռուբլու մօտ առաջին անգամում հինգերորդ դասատուն բաց անելու համար:

Յ. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հարցրում են հետեւեալը. «Մի խումբ թուրք ազգայինների օրերուն մտել են Թիֆլիսի մօտ 20 վերտ հեռաւորութեամբ գտնված Մաղկեվանք ուխտատեղին, կողոպտել են ուխտաւորներին և անհետացել են:»

Պ. Զարմայր Մտերեանց գրում է մեզ ՄՍԿՎՎԱՅԻՑ. «Զեր լրագիր մէջ քանիցս անգամ կարողացած եմ թէ ձեզ ուղարկում են զանազան տեղերից մեր ազգային հիմնարկութեանց, այն է՝ ուսումնարանաց լուսանկար պատկերները, որք, չը լինելով «Մշակը» պատկերազարդ թերթ, մնում են անտիպ: Համարձակվում եմ խնդրել զձեզ, մեծապատիւ խմբագիր, եթէ միայն անհատ չը թվի ձեզ, այսուհետև այդպիսի դէպքերում կործարդ տալ առաջուց ուղարկել այդպիսի պատկերները «Փարոս Հայաստանի» հանդիսին, որ լինելով պատկերազարդ տետր, կարող է զետեղել նրանց իր էջերի մէջ:»

Հնորակալութեամբ ստացանք պ. Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանից «Самочитель—учебникъ грузинскаго языка» լատիվում է բոլոր գրափաճառների մօտ: Գինն է 50 կ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Վան, 16 սեպտեմբերի

Արդէն մեր նախորդ նամակով գրած ենք թէ ինչպէս հարստահարութիւններն սաստկացած են դարձեալ և թէ ինչպէս կառավարութիւնը երբէք չաշխատիր նոցա առաջն առնուլ, այլ ընդհակառակն կը քաշվաբերէ որ հայերն փչանան. հետեւապէս ներկայ նամակով այդ մասին երկար գրել աւելորդ է, բայց միայն այս շաբաթվան մէջ գործուած հարստահարութիւններն այստեղ նշանակել անհրաժեշտ կը համարենք, որպէս զի ընթերցողներն զաղաչաբար առնուն: 1. Իրուսական փոխ-հիւպատոսի թղթաբերը կողոպտեցին. 2. Կիւսնի և նոյն գիւղի կեկեղեցին կողոպտեցին. 3. Արտամետցի Մուշեան Սահակ անուն 22 տարեկան երիտասարդը Ա տ ե ա մ ա ն գիւղին մէջ սպանեցին. 4. քաղաքէն 1 ժամ հեռու Փ ա շ ի ա դ իւր և ր ը ս ս ա ժ տ ե ի լ թ կ մարդ սպանեցին, մի

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей программѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы, обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнымъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденція; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная; театральныя и музыкальныя извѣстія; судебная хроника. Историческія листочки; разныя извѣстія; биржевыя, желѣзно-дорожныя, торговыя и др. свѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

Table with subscription rates: На годъ 6 руб., полгода 4 „, 3 мѣсяца 3 „, 1 мѣсяць 1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“, Столешниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. Н. П. Ланина, въ его конторѣ, и у всѣхъ извѣстныхъ книгопродавцевъ Москвы; въ С.—Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гл. иногородные благоволѣвъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москворѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Վ Ա Ն Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Վ

Բոլոր եւրոպական լրագիրներին համար Մոսկվայում (Центральная контора объявлений для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԳՆԻՈՒՆՈՒՄ Է յայտարարութիւններ ԲՈՒՐՈՒՍ և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ համար խմբագրական ԳՆԵՐՈՎ, նշանաւոր ՋԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Բուսուսց ամենօրեայ շաբաթական, պատկերազարդ և ծարական լրագիրներին ԳՆԻՈՒՆՈՒՄ ԳՐԱՍԵՆԵԱՎ ԱՄԵՆՈՐԵԱՅ ՅԱՄԱՐԵՐՈՒԹԻՒՆ յունի բոլոր առևայ և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրներին համար: Թարգմանութիւնները ՁԻՒ են լինում: Իւրաքանչիւր յայտարարութեան համար ԱՊՍՆ ՈՒՅԱՎԱՆ № 4 ուղարկվում:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ա Ն Վ Ա Ր Զ Ե Ն Կ Ա Ջ Մ Վ ՈՒ Մ:

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ընդունվում է բոլոր լրագիրներին համար: 1—15 (4)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՄԵՇԱԳԻՐ ԵՒ ՓՈՔՐԱԳԻՐ ՕՐԱՅՈՅՑԻ 1880 Թ.

Հանդերձ չորս նոր հետաքրքրական պատկերներով

Մ ա ղ ե կ Ը ն տ ա ն ե ա ց ե . տ . յաւելուածով: Արդ՛հետև մենք արդէն բացեցինք երևանում սեփական տպարան, ուստի մեր ՕՐԱՅՈՅՑԻՆԵՐԸ կը լինեն պատրաստ Դեկտեմբերի մէջ:

Գումարով գնորաց զիջումն կը լինի: Մեր տպարանում ընդունվում են չափաւոր գներով ԱՄԵՆ ՏԵՍԱՎ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ:

Մեր հասցէն՝ Վ. Գրիբոյէդովսկայա 4-5 Ա. Գуламираячу. Արգար Գուլամիրեանց 4-5

ԱՐՄԱՍԱՅԱՄ ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ և նրա արտադրելի հետեանքներին առաջն առնելու համար ՄԻՋՈՑՆԵՐ Է ցոյց տալիս և ԽՈՒՆԻՆԻՆԻՆԻ Է տալիս Կայսերական զեղազոր ԳՇԻՀԱՅԻ (Gehibay) Գրացայում, Շտրիխա նամակներ կարելի է գրել առևայ, գերմաներէն և Ֆրանսերէն լեզուներով: Պատասխաններին համար պէտք է փոստային ՄԱՐԱՎԱՆԵՐՈՒ զարկել:

1—3 (5)

ՓԱՍՍԱԲԱՆ

ՎՂԱԳԻՄԻՐ ՎՂԱԳԻՄԻՐԱՎՈՎԻՉ ՄԱՐՏԻՆԿԵՎՈՎ ԿԻՉ այժմ բնակվում է ԱՅՎԱՋՈՎԻ տանը Արմանակի բարձր փողոցի վրա, Կատոլիկական փողոցի դիմացը, նոյն տանը, որտեղ ԳՆԱՍՏՈՒՆ Է գտնվում:

1—6 (5)

Մի երիտասարդ, որ երկար ժամանակ է վեր պարապել է պրատիկայով կամենում է մասնաւոր բնասիրներում կամ ուսումնարաններում կրկնութիւններ անել զինադիական բոլոր առարկաներից: Հասցէն հարցնել «Մը շակի» խմբագրատանը:

Типография А. А. Михельсона

ուրիշ վերաւորեցին որ երկու օրէն մուտ: 5. Ոսկիակ գիւղն իսպառ կողոպտեցին: 6. Սիկայ գիւղի ջաղացքը որ 1 1/2 ժամ հեռու է քաղաքէն աւարեցին: 7. կողոպտեցին նոյնպէս Շահապ գիւղի ջաղացքն: 8. Լիւս անապատոյ ոչխարներն յափշտակեցին: 9. Գարման գիւղի ոչխարներն տարան յափշտակելով: 10. Պ. կամարականի թղթաբերի ուղեկից եղող 11 հայերն ալ չարաչար կողոպտուցան, հետեւապէս թշուառացան: Բացի սոցանից խիստ շատ մանր զէպքեր ալ պատահեցան. բայց զանց կանեմ զանոնք յիշել, զի նոցա թիւ չը կայ: Սոքա բոլոր գործուած են այս վերջին շաբաթին մէջ, այն է միայն 8 օրվան շրջանի մէջ: Իսկ եթէ մէկ ամիս մէջ գործուած հարստահարութիւններն զէթ լսուածներն և իմացուածներն թուելու լինիմ, յայնժամ ստուար հատորներու պէտք կը լինի: Անգղիական փոխ-հիւպատոս պ. Քլէյվը կը տեսնէ այն հարստահարութիւններն, և թէպէտ բարեկարգ մարդ մ'է ինքն, սակայն ինչպէս կրկնի իւր ընթացքէն, ինքն հրահանգ ունի իւր կառավարութեան հետեւի այն քաղաքակրթեան որում կը հետեի նոյն ինքն անգղիական ներկայ պաշտօնէութիւնը: Շատ անգամ զանազան առիթներով կը յայտնէ պ. Քլէյվը իւր ունենալը ընթացքը և կը ջանայ համոզել թէ լաւագոյն է որ բարենորոգութիւններն ինքն թիւրքիսն անէ քան ու է տէրութիւն թիւրքոյ մէջ: Երբեմն ալ կը յայտնէ թէ յոյս կայ որ թիւրքիսն կը զգայ իւր պարտը: Հարստահարութեանց այսպէս սաստկանալն շատ ցաւ պատճառած է ժողովրդեան, որով ամեն բան իւր աչքը չի գար: Աւելի անտանելին այն է որ օրինակ, 6 ժամ հեռու գիւղ մը կողոպտված ժամանակ նրա բնակիչներն չեն կրնար քաղաք գալ բողբոկ վանս զի ճամբուն կէս տեղը իրենք ալ կամ կը կողոպտուին և կամ կը սպաննուին. այս է պատճառն որ բողբոկները քիչ են բաղադրամար հարստահարութիւն կողոպտ հետ: Այսպէս 2 կիրակին Ա. զգարման և Եր ընկերութիւնը ժողովրդային գումարում մը (միթինկ) ըրաւ, ներկայ հարստահարութեանց վրա խորհելու և առաջին առնելու զարման մը գիտելու համար: Ժողովրդէն բաւական մարդիկ ներկայացած էին մի թիւն կ'իւն. զանազան խորհրդածութիւններով վերջ վճռվեցաւ մի և նոյն իմաստով 4 հանրագրութիւն յինս. նոցա երկուսն տալ այստեղի եւրոպական (անգլիական և առևական) փոխ-հիւպատոսաց, մէկն յղել Վ. Պոլսի Պատրիարքարանը. չորրորդն ալ տեղւոյս կառավարութեան ներկայացնել: Պատրաստուցան հանրագիրներն շուտով մի թիւն կ'էն ընտրուած յանձնաժողովին ձեռքով և մինչև ցարկ հաղարարութեան ստորագրութիւններ զրուած են նոցա վրայ: Հանրագիրներուն իմաստն է բողբոկ հարստահարութեանց դէմ և ինչպիսի բերվինի դաշնագրին 61-րդ յօդուածին գործադրութիւնը, ուստից որ անկ է: Եթէ այս հանրագիրներն գործնական արդիւնք առաջ չը բերեն, յայնժամ ժողովրդի եմք, կասն շատերը, պահանջել կառավարութիւնէն ազատութիւն զէնքով պաշտպանելու զիրենք որ: Եր յարձակում կրին: Բայց ինչ որ ալ ըն մը, երեւոյթէն կը տեսնուի որ կառավարութեան ջանքն է փրկեցնել հայերը, և զգալիութիւնը աւելի մեծ է այս կողմէն որ հացի թանգութիւն կայ այստեղ որ սովի կեղտաբանք առնուլ սկսած է: Ժողովրդը մեծ նեղութիւն կը քաշէ այժմ. անօթի պառկող ընտանիքներ բազմաթիւ են: Յորնայն այն չափը որ 2 տարի առաջ 20 դուրու էր, այժմ 105 դուրու է բարձրացած է և հետզհետէ կը բարձրանայ, վանս զի այս տարվան հունձքը բաւական չը լինելով չը կրցաւ թանգութեան առաջին առնուլ, հետեւապէս մինչև յաջորդ հունձքին ժամանակը թանգութեան շարունակելն անտարակուսելի և բազմապատկելի է: Իսկ եթէ յաջորդ հունձց աղէկ լինելուն նշանները այս պարուն անձրեաց առատութեամբ երևան չենն զգալիապէս, ցորենին չափը 300 դուրու չէն աւելի կը բարձրանայ: Ներկայ թանգութիւնը այժմէն այնքան սաստկորէն ծանրացած է ժողովրդեան վրայ որ ամենին չը գիտեմք թէ ինչպէս կարելի է տակէն երնել: Այս մասին ալ կառավարութիւնը մեղաւոր է, վանս զի զարման սկիզբը երբ ցորենին զինք 50—60 դուրու էր, իւր ունեցած անթիւ քանակութեամբ արմիքներն հակառակ ժողովրդեան անդու թախանձանաց չը ծախեց մինչև որ 80—90 դուրու է բարձրացաւ և այն ատեն միայն ըսկաւ վաճառել: Բայց փոխանակ միայն տեղացի ժողովրդեան ծախելու, չարգիւց ցորենի արտահանութիւնը, որով հեռաբնակ քրդերը շահավաճառութեան համար անհամար քանակութեամբ ցորեն կրեցին զուրա. հետեւապէս հացի թանգութեան զիստար պատճառ եղան: Վանս զի, թէպէտ այս տարուան հունձքը բաւականացուցիչ չէր, բայց նախորդ տարիներէն այնչափ հաց մնացած էր որ կրնար բաւական լինիլ ժողովրդեան համար

մինչև յաջորդ հունձքը. իսկ երբ ցորենի արտահանութիւնը անարգել մնաց, թանգութիւնը անկէց առաջ եկաւ: Անկարելի է թիւրքիական կառավարութիւնը չը կրնար իւր ժողովրդեան բարեկեցութիւն առաջ բերել, ընդհակառակն ամեն կէտին մէջ ինքն պատճառ կը լինի ժողովրդեան թշուառութեան: Ուրիշ օրինակ մ'ալ: Գրեթէ 10 օրէ ի վեր տեղւոյս բոլոր խաղողները հատուցացած էին և կթուելու ժամանակ էր. բայց կառավարութիւնը իւր տասնորդներն առնելու համար պաշտօնեայնի խրկել և խաղողներն զրկել այնչափ ուշացուց մինչև որ սեպտ. 11-ին ամենատակի կարկուտ մ'եկաւ և բոլոր անգիւղներն փչացուց, այնպէս որ 500 լիտր զինի տուող այգիէն 20 լիտր զինի չէլաւ այլ ևս: Եթէ մէկը համարձակէր իւր այգիկովին անել առանց տասնորդ գրվելուն սպասելու, այն ժամանակ բոլոր հատվածի տուգանք տալով չէր ազատուիր: Այսպէս ահա ամեն պարագայի մէջ կառավարութիւնէն մնաց կը քաշենք. իսկ օգուտը՝

Սակայն արհեստ որ տակաւին կան անձինք որ 61-րդ յօդուածին վրայ յոյս դրած են: Բոլորովին հաստատ համոզուելու է, որ այդ յօդուածին գործադրութիւնը երբէք չէ կարելի, եթէ թիւրքոյ ձգուի:

ՄԵՍԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱՎԱՆ ԹՂՈՒԱԿՑԻՑ

ՆՈՐՆԱԽԻՉԵՒԱՆ, 14 նոյեմբերի: Նախիջևան քաղաքը տնուում է իր հարիւրամեայ տարեդարձը: Քաղաքային վարչութիւնն այդ օրը նշանաւոր հանգիստացրեց նրանով, որ վրձուեց քաղաքում արհեստաւորների ուսումնարանի հիմնքը: Հասարակութիւնը մեր յարգելի նահանգապետ Գուրգոյի անունով երկու թռչակաւորներ ընդունեց: Ստորագրութիւններ բացեցին, և բաւականին նշանաւոր գումար հաւաքեցին յօգուտ Երզրոււմի ապագայ երկրագործական դպրոցի և մէջիկօ-խիրուղիական կարօտեալ ուսանողների:

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՑ

Հ. ում, 13/25 նոյեմբերի: Նոր կարինէտը կազմակերպվեցաւ հետեւեալ կերպով. Կայրօլի նշանակված է խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր, Դէպրէտին նշանակված է ներքին գործերի մինիստր, Մալխանի—Ֆինանսներ, Վ. Կլլա—արգարաւատութեան, Բակկարատի—ժողովրդական շխտատու իւնիւնթի, Գարանտին—ժողովրդական լուսաւորութեան, Բոնէլլի—պատերազմական, Ակոտ—ճովային և Միչլիլի—զիւզանտեսութեան մինիստր:

ԲԱԳԷՆ, 13/25 նոյեմբերի: Այսօր առաւօտ Գօրջախով ուղևորվեց զէպի Շոտաղարտ, էջոր նա Բերլինի վրայով կուղևորվի Ս. Պետերբուրգ:

Կ. ՊՈՒՍ, 13/25 նոյեմբերի: Նրէկկայ թիւրքոյունական մասնաժողովի նիստը յետաձգվեցաւ: Կարծում են Բ. Գուլան այլ ևս երկրորդ նիստ չի նշանակի, այլ կը ներկայացնէ այդ գործի վճիռը Եւրոպային: Այսօր Ղալաթլիայի բանկիրները և թիւրքաց Ֆինանսների մինիստրը ստորագրեցին Ֆինանսական պայմանագիրը:

ԼՈՒՂՈՆ, 13/25 նոյեմբերի: Նրէկ կայացաւ մինիստրների խորհրդի նիստը: Սլայգօի կոմս սուլթանն մէջ առաջին քննութիւնը վերջացաւ նրանով, որ բանտարկված Դէլիին յանձնեցին քրէական դատարանին: Վոլլէրի և դը Վիտտայի դատաւճիռը յետաձգվեցաւ: Դէլի երաշխաւորութեամբ արձակված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 նոյեմբերի: Նոյեմբերի 23-ին նշանակված է Բարձրագոյն զօրահանդէս:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ